

Ամբաս Բիւրաս
Խմբագրութիւն «Փիիկնիկ», Ի
Աղեխանգրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

Չր. 45
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՅԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Է
Ձեռագիր ԵՅՂՊԱՐ-
ձուիր

ՓԻԻԿՆԻԿ

Կը ծախուի ԹԷԿ ղըուօ ողջի

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Չր. 8
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՅԱՄՍԵԱՅ 8

ԿՈՎԿԱՍ
ՏՆՐԵԿԱՆ ՐԱՂ. 6
Ազգեր կ'ընդուն-
ուին մասնաւոր
պայմաններով.

Գ. ՏԱՐԻ

21 ՕԳՈՍՏՈՍ 1902

Թիի 10

ԵՐԿՈՒ ԵՐԿՍԵՌՆԵՐԸ

ԿԿՄ

ՊՕՂՈՍԵԱՆ ՈՒ ԳԱՂԱՍԵԱՆԸ

(Շարունակութիւն եւ վերջ)

Նախորդ յօդուածով կը յանձնա-
րարէինք երկ. վարժարանը մաքրել,
նեքսէն ու դրսէն, ճամբայ տալ մէկէ
աւելի ձրիակերներու, որոնք տարի-
ներէ ի վեր ազգային սնտուկին ցեցերը
դարձած էին, առանց օդտակար ար-
դիւնք մը յոյց պալու, իրենց ա՛յնքան
երկարատեւ, ա՛յնքան լաւ վարձատրը-
ւած պաշտօնավարութեան ընթացքին
մէջ :

Արդ, կուգանք մեր Պատ. ըն-
թերցողներուն—որոնք անտարակոյս կը
չահագրգռուին մեր ազգային մանկը-
տիին դաստիարակութեան հարցովը—
աւետել թէ՛ մէկ կողմէ, Վսեմ. Աբրա-
համ Բարթող Պէյին ամեն նկատումներէ
զերծ ու ամեն հաշիւներէ վեր բարեա-
ցակամութիւնն ու անյողզողզ որոշո-

ղութիւնը, միւս կողմէ Պատ. Հոգաբար-
ձութեան անդամներուն անկողմնակալ
ողին ու հեռատեսութիւնը, մէկ հար-
ուածով վերջ մը դրին անիծեալ «statu
quo» ին, հրատարեցնելով բոլոր ուսու-
ցիչները, առանց խտրութեան սեռի,
հին ու նոր, մեծ ու փոքր, ամենքն ալ
վերջնականապէս դադրեցնելով իրենց
պաշտօնէն :

Այս տնօրինութեան— թո՛ղ ներուի
դիտել տալ հոս—զոհ կ'ըլլան, դժբաղ-
դաբար, մէկ երկու արժանաւոր ու-
սուցիչներ, թէ՛ երկրորդական։ Պատ.
Հոգաբարձութեան այս կարգադրու-
թիւնը զնահատելի պիտի գտնենք ա՛յն
ատեն միայն երբ, ճամբուածներուն
տեղ յաջողին դնել յաջորդներ, որոնք,
իրենց գործունէութեամբն ու արդիւ-
նաւոր պաշտօնավարութեամբը շուտով
մոռցնել տան Պօղոսեանի մօտաւոր սե-
անցեալը. յաջորդներ, որոնք, առանց
չինսած ըլլալու համբաւ մը, անուն մը,
ուսուցանել դիտնան ու դաստիարակել.
Թարմ ուժեր ըլլան անոնք ու չը յոգ-
նածներ :

Այն ատե՛ն է որ տեղիս հասարա-

կութիւնը պիտի պարծենայ իր ազգային վարժարանին տիպար Հոգաբարձութեամբը:

Մաղթելով որ, յառաջիկայ տարեշրջանը Պօղոսեան երկսեռ վարժարանին համար բեղուն ու փայլուն տարեշրջան մ'ըլլայ, շնորհիւ ձեռնհաս ու գործունեայ պաշտօնեաներու, որոնք զգալի զարկ մը տալով ազգային դաստիարակութեան ու կրթութեան, Պօղոսեան վարժարանը վերականգնեն ու վերածեն զայն ազգային ճշմարիտ կրթական յարկի մը, ուր տարուէ տարի պատրաստուի եգիպտահայ նոր սերունդը, արդի գործնական առողջ գաղափարներով և ընտիր զգացումներով ու նկարագրով, կ'ը վերջացրենք մամուլին տեսութիւնները, անցնելու համար Գահիրէի Գալստեանին, որ, աւա՞ղ, մէկ երկու բացառութիւնները յարգելով — ապիկար ձեռքերու մէջ կը չարչարուի:

Գալստեաներկ վարժարանը, հակառակ իր անմահ բարերարին պատկառելի կտակովն ապահովուած պիւ... ճէին, չէ կրցեր և չը կրնար ընծայել ազգին օգտակար ու պատուաբեր զաւակներ, քանի որ չէ ունեցեր ու չունի ձեռնհաս ուսուցիչներ:

Տնօրէնը, Տիար Յովհաննէս Սեթեան, ծանօթ է մեզի հայերէնի ու ֆրանսերէնի իր քաջ հմտութեամբը. բանաստեղծ՝ խառնուած քով ու կոչումով, քառորդ դարէ մ'ի վեր կը պարուպի ուսուցչութեամբ:

Առաջին անգամն է որ — եթէ չ'ենք սխալիր — տնօրէն կ'ըլլայ, յաջորդելով Գահիրէի Գալստեան վարժարանին նախկին Տնօրէն Տիար Կարապետ Նաւասարդեանի. յետոյ, այդ պաշտօնը կը յանձնուի Տ.Սրապիոն Սամուէլեան ռուսահայ քահանային, ինք մնալով պարզ ուսուցիչ մը նոյն վարժարանին մէջ: Անցած տարի կը վերակարգուի Առժամեայ Տնօրէն և կը մնայ

մինչև ցարդ նոյն պաշտօնին մէջ:

Տիար Յ. Սեթեան, իբրև պարկնշտ ու ազնիւ մարդ, պիտի ներէ անշուշտ մեզի յայտարարել թէ՛ իր օրով ո՛ր և է արդիւնք մը չէ տուած վարժարանը:

Այո՛, ո՛չ ոք կրնայ ուրանալ իր արժանիքը, իբրև բանաստեղծ ու իբրև գրող. սակայն Տնօրէնէ մը պահանջուած էական յատկութիւնները չ'են ատոնք, դժբաղդաբար: Տնօրէն մը, պէտք է ըլլայ նկարագրի տէր, անկախ նկաշագրի. պէտք է անի կառավարել գիտնայ, սկող գացող հոգաբարձուներու կամ ուրիշներու ազդեցութիւնը չը կրելու չափ կորով ցոյց տայ իր պաշտօնին կիրառութեանը մէջ. իւրաքանչիւր ուսուցչի հոգեբանութիւնը սերտած, պէտք է վառ պահէ համերաշխութեան ոգին ամբողջ ուսուցչական մարմինին մէջ. երբ ազգել գիտնայ ուսուցչական մարմինն վրայ, կրնայ այնուհետև պատկառանք ներշնչել իր շուրջը:

Մինչդեռ Գալստեան վարժարանին յարգելի տնօրէնը, բարեմոյս անձնաւորութիւն մը թէև, զուրկ է վերել յիշուած լաւութիւններէն: Աւելցնենք այս դժբաղդութեան վրայ կարդ մը անճարակ ու ձրիակեր ստորակարգեալներու թիւը, կ'ունենանք մեր այքին առջև տխուր այժմեութիւնը Գահիրէի կրթական հարցին:

Անճարակները, ձրիակները որոնց պարագլուխն է պատուելի Օհան Խընտամեանը, բացարձակ զրօ մը:

Ժողովրդային առած մը կը յիշեմ, քանի՛ կը տեսնեմ այդ մարդուկը Գալստեան վարժարանին մէկ անկիւնը կծկտած, կը հազայ, ալ ու ձախ կը թքնէ, արգահատանքի չափ զզուանք զգացած եմ անոր, այդ ցաւագարին հանդէպ: Ի՞նչ կը նշանակէ մատղաշ ու անմեղ սերունդ մը զատապարտել ժամերով ծծելու թունաւորուած օդը:

ի՞նչ խղճով աղգային կրթական յարկին մէջ ուսուցիչ կարգել մարդ մը, որ միշտ հիւանդ, հիւանդանոց պէտք է տարուի ու դարմանուի: Մեր նախնիք ի զուր չ'են ըսած. «Առողջ միտք յառողջ մարմնի»: հիւանդ մարմինի մէջ առողջ միտք չը բնակիր:

Ուրիշ հիւանդ մ'ալ այդ մեր Տիար Ուզունեանը, շարժապահ բանջարակերը, որ առողջաբանութիւնը պիտի աւանդէր. . . :

Ի՞նչ երկարենք, վարժարանը բարեկարգութեան է կարօտ:

Աղջկանց վարժարանին վրայ մեր կարծիքը յայտնած ենք արդէն: Եթէ ձեռնհաս տնօրէն մը, խղճամիտ հոգաբարձութեան մը բարի կամքին միացրնէ իր ջանքերը, լաւագոյն և աւելի գահացուցիչ արդիւնք պիտի տեսնենք յառաջիկայ տարուան մէջ: Օր. Սօֆի Մանիսալեան, տիպար ուսուցչուհի մ'է, որ իր վեց տարուան բարւոք և արդիւնաւոր պաշտօնավարութեամբը հպարտանալու իրաւունք ունի:

Պատկ. Բաղ. Ժողովին լուրջ ուշադրութեանը յանձնելով ներկայ հակիրճ տեսութիւնը, կը վերջացնենք զայն և կը սիրենք յուսալ թէ՛ նոր հոգաբարձութիւն մը պիտի ջանայ Գալստեան վարժարանը վերածել իր պատկառելի պիւտճէին համապատասխան վիճակին:

Ս. ՊԱՏՏՐԱՐԻՒՆ ԵԱՄԱԿԸ

Կ. Պոլիս 14 Յունիս 1902

Պատարժան անդամք

Տնօրէն Խորհրդոյ Որպերու Հոգաւար Ընկերութեան

Ի Գահիրէ

Ստացանք Յունիս 12 թուակա-նաւ Ձեր ուղղած նամակն, և ընդ նմին Գրէտի-Լիօնէի մէկ չէքն 41, 6, 7 անդդոսկոյ (քառասուն և մէկ սթէրլին

վեց շիլին և եօթն բէնս), զոր զրկած էիք իբր իննամսեայ թոշակ Արապկերի որբանոցին մէջ ընկերութեանդ պաշտպանութեան ներքև գտնուած 12 որբոց, սկսեալ տարւոյս 1 փետր. է ցվերջ Հոկտեմբեր ամսոյ:

Գաւառական մէկ քանի որբանոցներու, ընդ որս և Արապկերի որբանոցին տեղողութեան քառամսեայ պաշտպանութեամբ լրացած ըլլալով՝ ստիպուած ենք այլ ևս դադարեցնել անոնց յատկացեալ թոշակներն, և ի հարկէ օգնութիւնն՝ զոր կը մատուցանէք՝ շատ աւելի պիտի արժէ որբանոցին, և նոյն իսկ անոր գոյութեան պահպանման պատճառ պիտի լինի, հետեւապէս կրկնապէս շնորհակալ ենք Ձեր ստանձնած մարդասիրական ծառայութեան համար, և կը խնդրենք որ հաճիք մըշտավառ եռանդեամբ շարունակել Ձեր բարերար հովանաւորութիւնն նոյն որբանոցին վրայ, ի սիրտնս խումբ մը անտէր մանուկներու, որոնք Ձեզմով պիտի մոռնան իրենց դժբաղդութիւնն և պատրաստեն իրենց ապագան:

Մնամք աղօթարար

Պատրիարք Կ. Պոլսոյ

ՄԱՂԱԲԻԱ

ՀԱՅՆ ՈՒ ԹԱՏՐՈՆԸ

Ժողովուրդն ու ԴԵՐԱՍԱՆԸ

Դեռ հեռի է ըմբռնելէ Հայը թատրոնը, անոր նպատակն ու անոր ներգործութիւնը ժողովուրդին խաւերուն մէջ: Լոկ ժամանց մ'է անիկա իրեն համար, թատրոն կամ ֆարակիօզ, կամ որ և իցէ զուարճացնող մի բան, միևնոյն է. բաւ է ոչ բաներ մը տեսնայ, բաներ մը լսէ զինք զբօսցնող, ու երբ ինք հոգ, բերանը մինչև ա-

կանջները բանալով, պզտիկցած աչքերն ուրախ արցունքներու մէջ լուրուն կրցած է խնդալ, օ՛, ամեն ինչ կատարեալ է:

Մինչդեռ անդին, բեմին հակառակ կողմը, ճշմարիտ թատրոնին մէջ, իր քթին տակ, իր տան մէջ իսկ կը խաղացուին ամենէն լաւ տուամներն ու կատակերգութիւններն իրենց ամենանուրբ մանրամասնութիւններով ու ամենէն աննշմարելի nuance ներով:

Ահա, թէ ինչ պէտք է պահանջէ ժողովուրդը, թէ ինչ պէտք է գրգռէ ու վառէ աւիւնը մեր հեղինակներու երեակայութեան, սրուն միացնելով en plein air այդ իրականութիւնը, իրականութիւն մը զուտ, մերկ, թօթափած իր անճոռնի շպարներն ու սնօտի վարդերը, պիտի տան մեզ կեանքի դեռ տաք կտորներ, ժողովուրդին անհատներուն մէջէն ու անոնց ազիքներէն քաշուած, ու ատոնց ներկայացումը պիտի թողու հասարակութիւնը բերանաբաց, բայց այս անգամ, ո՛չ մինչև ականջներն ու անոր ահաբեկ, կլոր, պաղած աչքերը պիտի գամուին դերասանին վրայ, որ տեսակ մը գուշակ դարձած հումայ, անոր՝ հանդիսատեսին՝ կեանքը, անցեալն ու ներկայն, երազներն ու գործքը պիտի պատկերէ, ու այդ ապրուած կեանքին վերապրումը դաս մը պիտի ըլլայ անյողդողդ բոլոր ներկայներուն համար: Ու բեմին վրայ, ժողովուրդին դիմաց պիտի ցցուի ճշմարտութիւնը մերկ ու ջինջ, ցոլացնելով իր անբասիր հայելին, որուն մէջ հանդիսատեսն ի՛ր իսկ պատկերը պիտի տեսնէ, պատկեր մը դիմակազերծ, իր ոսկորներովն ու ջիզերով, և մերկացած իր քօղերէն ու այդ ընդհարումը պիտի սրբագրէ զինք ու սրբագործէ անոր էութիւնը:

Արդ, առիթն ունենալով ներկայ գտնուելու մեր սիրող դերասաններու վերջին մէկ ներկայացման, տխրու-

թեամբ չափեցի հեռաւորութիւնը այն կէտին ուր կը գտնուէր մեր բեմը:

«ՍԻՐՈՅ ԶՈՂԵՐ» անգոյն, անկապ ու աննպատակ տկար թատերախաղը կը նետէին հոն մեր երեսին, որուն տակալու մեծ համբերութիւնը ունենալ ճգնեցանք: Նախատել չէ՞ միթէ հասարակութիւնն այնքան իրարու յաջորդող խենդ ու խելառ տեսարաններու թաւալումը միմոսել, մեծ բաներ մը ընողի հովերով գօտևորուած, ու այդ ազտոտ փշրտուքը թափթփել հանդիսատեսին քթին տակ որոց քարշ բուրմունքը մինչև թոքերը կը թափանցեն:


Եւ այդ ամենը յուզիչ ընծայելու համար, խեղդել բեմը անձնասպանութիւններով և միայն ու միայն անձնասպանութիւններով որք կը կատարուէին մէկ հատիկ դաշոյնով մը որ ինքըն ալ իր կարգին շուարած, շլմորած, մէկուս կսկորդէն միւսին կուրծքը կը միտուէր անդադար, նախորդ զոհին դեռ միացող արիւնը խառնելով յաջորդին արեան:

Երբ թատերախաղ մը հանդիսատեսը յուզեցող միակ իղճով սպանութիւն միայն կը գործէ բեմին վրայ, այդ արդէն կը բաւէ ճանչցնելու իր աստիճանը:

Ուստի կը խնդրուի Պ. Հեղինակէն որ յանուն և ի յարգանս ազգին, փութայ անհետացնել իր այդ գործը որ սրբապղծած է բեմը իր անդրանիկ երևումովն իսկ:

Ե՛հ. ա՛լ կը բաւէ, այլևս մենք չենք կրնար լողալ պարապովեան մէջ, բան մը կուզենք որ մեզ բան մը ըսէ, որ բան մը տայ մեզի:

ՀՐԱՏ



— ՅԱԶՈՐԴ ԹԻԻԻՆ ՄԷՁ ԿԱՐԴԱԼ Տ. Բիէո Քիյեարի շահեկան յօդուածը «Օրմանեան Պատիարի հրատարական»ը խորագրով:

ԲԱԳՈՒԻ ՀԱԿԱԼԿՈՂԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Բագուի մեր Ռուսահայ եղբայրները նախաձեռնութիւնն ունեցած են 1902 Յունվար 26 ին կազմակերպելու Հակալիւրական ընկերութիւն մը, որուն կանոնադրութիւնը կը հրատարակենք այս անգամ խոստանալով առաջիկային աւելի երկար եւ մանրամասն գրել անոր նպատակին ու կարեւորութեանը մասին:

Յիշեալ ընկերութեան Պատ. վարչութիւնը պաշտօնապէս ընտրած է իր ներկայացուցիչը, որ իր ընկերներով գործի ըսկըսած է արդէն, եւ որոնց անունները պիպի հրատարակեն առաջիկային:

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Գիտե՛ք ի՛նչ է խո՛ւում այս մարդը իր դողդոջուն ձեռքում երեքացող այս գաւաթից: — Նա խում է իր կնոջ եւ զաւակներին արտաւեր, արիւնը, կեանքը:

ԼԱՄԸՆԷ

Բագուում 1902 թ. Յունվարի 26 ին կազմուած է Հակալիւրական ընկերութիւն, որի նպատակն է ամէն ոքի զգուշացնել և հեռու պահել ալիոլի պատճառած անհաստական, ընտանեկան և ընկերական չարիքներից, համոզուած լինելով որ ալիոլը մեծ չարիքն է պատճառում մարդկութեան վտանգելով նրա անդամների առողջութիւնը, քայքայելով բարոյականութիւնը, աղարտելով պատիւը և առաջացնելով տնտեսական կործանում:

Ընդհանուր վիճակագրութիւնները ցոյց են տալիս, թէ առհասարակ ալիոլամոլներն ու իրանց սերունդներն են, որ լցնում են բանտերը, յիմարանոցներն ու հիւանդանոցները: Ալիոլամոլութեան պատճառով նւազում են նաև ծննդաբերութիւնները և ամբողջ սերունդներ այլասեռում:

Վերջապէս ալիոլը մարդկութեան ասեղ թշնամիներից մինն է, և նոյնքան աւերումներ է գործում որքան անառակ կեանքը, սովը, ժանտախորը և այլն:

Ուստի գիմում ենք և հրաւիրում բոլոր ողջամիտ, հեռատես և բարի անձանց, ուր որ էլ գտնեն նրանք, ալիոլ կոչուած այդ սարսափելի թոյնից խոյս տալու գաղափարը ամեն տեղ արծարծելու գործում մեզ աջակցել:

Ընկերութեան անդամ ընդունուած են անխտիր ամէն հասակի, սեռի և կրօնի պատկանող անձինք, կարող են անդամակցել և օտարազգիներ:

Ընկերութեան անդամակցող իւրաքանչիւր անձ ընդունելու և գործադրելու է հետեւեալ վեց յօդուածներից բաղկացած կանոնները, որոնք են.

1. Խոստանալ կեանքի ընթացքում բնաւ երբէք ալիոլ պարունակող ըմպելիք չխմել, ի բաց առեալ միայն այն դէպքում, երբ բժիշկը յանձնարարում է իբրև դեղու գարման:

2. Բոլոր այցելող հիւրերի, ծանօթների, բարեկամների և ազգականների բնաւ երբէք ոգելից ըմպելիներ չհրամցնել:

3. Համոզել հնար եղածին չափ ամենքին, որ հարսանիքներում, տոներում, անւան տարեդարձներում, մէկ խօսքով ո՛չ մի ուրախ կամ տխուր պարագայում և ո՛չ մի վայրում ալիոլ պարունակող ըմպելիք չմատակարարել ոչ ոքի:

4. Հակալիւրականութեան գաղափարը միշտ և ամենուրեք տարածել սուրբ պարտականութիւն համարել:

5. Պարտք համարել նոյնպէս իւրաքանչիւրի նիւթական միջոցների ներածին չափ՝ ալիոլականութեան չարիքների մասին խօսող գրկոյկներ կամ գրքեր գնել ու ձրիաբար բաժանելը ամէն տեղ:

6. Այս խոստումները չդրժել, հակառակ պարագայում ընկերութիւնը իրաւունք ունենայ դրժողից բացառութիւն պահանջել, իսկ ծայրայեղ գէպքում՝ հարկ եղա՛ծ և արժան դատուած բարոյական պատիժը տալ:

Վարչութիւն Բագուի Հակալիուական Ընկ.

- Նախագահ Ա. Ծոցիկեան
- Քարտուղար Գ. Եղիկեան
- Անդամ Տիկ. Հրաչեայ
- Անդամ Ե. Սարաֆեան
- Անդամ Ա. Ճգնաւորեան
- Անդամ Մ. Աւագեան

Ք Ր Ո Ն Ի Կ

— ՄԱԿԵԴՈՆԻԱՆ ՈՒ ՖՐԱՆՍԱՆ. —

Քաղաքական շրջանակներու մէջ զրոյց կը շրջի թէ Ֆրանսան մտադիր է տէրութեանց առաջարկել Կ. Պօլսոյ մէջ եւրոպական գոնկրէի մը գումարումը, մակեդոնական հարցը լուծելու համար:

Գօնկրէն պիտի քննէ ֆրանգլուսա դաշնակցութեան մէկ ծրագիրը, գործադրելու համար մակեդոնական գօմիթէին համբաւաւոր գրքոյկին մէջ պահանջուած վերանորոգումները:

ՓՈՔՐ ԱՍԻԱՆ ՈՒ ԳԵՐՄԱՆԻԱՆ.

Պէրլինի մէջ Փոքր Ասիոյ ընկերութիւն մը կազմուեցաւ Վիրխովի պատուակալ Նախագահութեան տակ: Գերմաններուն ծրագիրներն ի Փոքր Ասիա հետզհետէ աւելի յայտնի կ'ըլլան:

— ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԳՕՆԿՐԷՆ. —

Պուլկար կառավարութիւնը, հակառակ Դրան բողոքներուն, և յարգելով օրէնքը համախրմբումի ու ընկերակցութեան մասին, չ'արգիլեց գօնկրէն, որ գումարուեցաւ ամսոյս 17ին ի Սօֆիա:

Գօնկրէն կը բաղկանայ 58 պատ. դամաւորներէ, որոնցմէ 30ը զօրավար Զօնչէֆի խումբէն, իսկ 28ը Պօրիս Սա-

լրաֆօֆէն: Բայց 35 պատգամաւորներ ալ, ուրիշ ընկերութիւններէ, որոնք չ'են պատկանիր կուսակցութեան, ամենքն ալ Սարաֆօֆի խումբէն, կը խնդրեն մասնակցիլ Գօնկրէին: Իրենց խնդիրը պիտի քննուէր. եթէ մերժուի, այդ ընկերութիւնները կը սպառնան գումարել Հակագօնկրէ մը:

Ո և է անկարգութիւն չը պատահիր մինչև ցարդ քաղաքին մէջ, շնորհեցաւ կառավարութեան, մասնաւորապէս պատերազմի նախարարին կողմէն ձեռք առնուած զդուշութեանց:

— ՅԱՐԸ հրամայեց ազատ արձակել Մօսկուայի մէջ Փետրուարի խռովութեանց հետեանքով Սմօլէնսքի բանտը փակուած ուսանողները. կառավարիչը զանոնք արձակեց, անոնց կարճ խրատ մ'ուղղելէ ետքը:

Յարը, իրա՛ւ, ամենողորմած է:

— ԱՀՄԷՏ ՐԻՖԱԹ, նախորդ Մեծ. Եպարքոս Խալիլ — Րիֆաթ բաշային երկրորդ որդին, գաղտուկ մը փախաւ Կ. Պօլսէն, իր երէց եղբօրը ծավիտի — որ 2 տարի առաջ կամուրջին գլուխը սպաննուեցաւ — որդիին հետ, որովհետև Սուլթանը չէր թողուր որ մարդասպանին դատավճիռը դորժագրուի:

Այս փախուստը մեծ յուզում կը պատճառէ:

— ՎՍԵՄ. ԱԲՐԱՀԱՄ ՊԷՅ ԲԱՐԹՈՂ, գրութիւն մ'ուղղելով Սրբ. Առաջնորդին, մատնանիչ ըրած էր տեղիս ազգ. երկ. վարժարանին ողբալի կացութիւնը, եկեղեցական իշխանութեան թուլութիւնը, Խնամակալութեան մէկ կամ երկու անդամներուն կողմէն իրերու վիճակը (statu quo) անփոփոխ պահելու յամառութիւնը, մանաւանդ երկ. վարժարանը հիմնովին բարեկարգելու համար քանի մ'ապիկար ուսուցիչներ հրաժարեցնելու անհրաժեշտութիւնը, ևն: Նորին Վսեմութիւնը, տեղիս ազգային բարոյական ու նիւթական շա-

հերուն պահպանութեանը նախանձախնդիր, տիրող բոլոր անկարգութեանց անյապաղ վերջ մը դնելու իր անյողդողդու ու բարի կամքին հակառակ յարուցուած մէկէ աւելի արգելքներուն դէմ արդար զայրոյթով լեցուած, յիշեալ գրութեամբ իր հրատարականք տուած էր Խնամակալութեան Փոխ-Ատենապետութեան պաշտօնէն, ինքզինք ազատելու համար ծանր պատասխանատուութենէն:

Սակայն ուրախութեամբ կը ծանուցանենք որ Սրբ. Առաջնորդը պաշտօնազրով մը խնդրած է նորին Վսեմութենէն շարունակել իր բարձր պաշտօնը, յայտարարելով որ Խնամակալութեան բոլոր անդամներն ալ համամիտ են իրեն և կը խոստանան անկեղծօրէն և անվերապահօրէն ուժ տալ նորին Վսեմութեան ամեն ազգօգուտ առաջարկներուն ու խորհուրդներուն գործադրութեանը:

Հեռեւաբար. ՎՍԵՄ. ԱՐԲԱՀԱՄ ՊԷՅ ԲԱՐԹՈՂ, վերընդունած է իր պաշտօնը:

— ԹՍՂ. ԽՆՍՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ վերջին նիստին մէջ տրուած որոշման մը համաձայն, Պօղոսեան ազգ. երկսեռ վարժարանին ուսուցչական մարմինն ամբողջութեամբ դադարեցուցուած է պաշտօնէ:

Վսեմ. Արքայամ Բարթող Պէյ պաշտօնապէս այս որոշումը հաղորդեց ի դիմաց Թալ. Խնամակալութեան առ որ անկ է:

— Տիար Աշխատանքի Բապոստոսեան, 1895 ին 4. Պոլսոյ Բոսթրթ Գօլէճէն ընթացաւարտ, 99ին Անգլիս երթալով 4 տարի ուսանողութեամբ անցուցած և, Բիզանդիոնի թղթակից եղած է:

Լոնտոնի Արքայական Գօլէճէն (King's College) շրջանաւարտ, յաջողքնութենէ մը վերջ ճարտարապետ-երկրաչափի վկայական ստացած, յետոյ, Երկաթուղիներու վարչութեան

մը մէջ ընդունուելով մինչեւ այս տարուան սկիզբները հոն մնացած ու առաջ տարած է իր արուեստին փորձառութիւնները: Համակրելի երիտասարդը մէկուկէս ամիս կայ որ հոս եկած է: Ուրախութեամբ իմացանք թէ՛ Տէրդաի երկաթուղեաց երկրաչափ կարգուած է շնորհիւ իր վկայականրուն ու յանձնարարուած ըլլալով բարձր ու ազգեցիկ անձնաւորութեանց կողմէն, որոնցմէ հաւասարապէս սիրուած է:

Կը մաղթենք և կը յուսանք թէ Տիար Աղեքս. Բաբուճճեան քիչ ատենուան մէջ մեծամեծ յառաջդիմութիւններ պիտի ընէ:

— Գահիրէի Հրայճեայ Խումբը գործունէութեան մէջ է միշտ. միթաւրական բան մըն է ասիկայ մեր թատերական աշխարհին մէջ, զոր կը նշանակենք ա՛յնքան գոհունակութեամբ որքան կը ցաւինք տեղիս Արեւել. Թատերա. խմբին վրայ, որ կազմալուծուելու մէջ է:

Ա Ձ Դ

Գեղարուեստասէր երիտասարդութեան կը ծանուցուի թէ Հայ նուագածուաց Խումբը, շարաթ մը կայ, իր վարժութիւնները կը կատարէ մեր Պօղոսեան վարժարանին մէջ, բշ. դշ. և ուր. գիշերները ժամը 9էն սկսեալ, ուսուցչութեամբ յարգելի Մախարո Պ. Ուկո Բիչուարեյի:

Իսս առնել փափագողները դիմեն հոն և տեղեկանան մանրամասնութեանց:

ԳՈՂ ՄԺԴՈ

Գաւառական կեանքէն

Գրեց ՆՇԻԿ ԵՐԷՑ

Ընդ մակրով է այս վէպը, որ մօտերս պիտի լոյս տեսնէ Արախ տպարանէն: Բաժանորդագրուիլ փափագողները 5 զրշ. ի նամակագրօջմ կրնան շրկել Փիւնիկի հասցէին:

Ա Չ Գ

ԱՅՍ ՎԵՐՉԻՆ ԹԻՒՆ է զոր պիտի զրկենք Արտասահմանի (Պուլկարիա, Ռուսմանիա, Կովկաս, Ֆրանսա, Անգլիա և Ամերիկա)ի մեր 250 է աւելի բաժանորդներուն, որոնք, հակառակ մեր այնքան կրկնած ազդարարութեանց, մինչև ցարդ ՁԸ ՎՃԱՐՆՅԻՆ գէթ անցած տաւշըջանին իրենց ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ:

Ապրիլն ձրիակերները:

Թո՛ղ հայ հասարակութիւնը գանգատի թէ ինչո՛ւ չ'են յաջողիր ու յարատեւեր հայ թերթերը:

Ա Զ Ո

Երիտասարդ մը, որ քաջ Անգլիագէտ է, պատրաստ է մասնաւոր դասեր տալ անգլերէնի, տուներու մէջ ալ, խիստ զահացուցիչ եւ դիւրամատչելի պայմաններով:

Փափագողները դիմեն Փիւնիկի խմբագրութեան:

« ԱՐԱՔՍ »

Հայկական տպարանը թէ՛ հայերէն, թէ՛ գաղղիերէն և թէ՛ ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ, ԽԻՍ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ:

SALAMANDER

Ս Ա Լ Ա Մ Ա Ն Տ Ը Ր

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Ծովային, Գետային և Ցամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիւզոր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՖԱԵԱՆ

Աղեփասնորիա, պզտիկ Մեկշիէ Ապուսարսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'Ա Լ Ի Ա Ն Ս

Ծովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ